ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

ԱլԳ Քաղաքացիական հասարակության

ֆորումի Հայաստանի ազգայինպլատֆորմի

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Մայիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

2. Հիմնարար արժեքներ

3. Հիմնարար սկզբունքներ

4. ՔՀՖ ՀԱՊ անդամների էթիկայի կանոններ

5. Էթիկայի կանոնների խախտումներիհաղորդում

6. Պատասխանատվություն

7. Անցումային դրույթներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Արևելյան գործընկերության Հայաստանի ազգային պլատֆորմի կազմակերպական սկզբունքների համաձայն՝ Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԼԳ) Հայաստանի ազգային պլատֆորմը (այսուհետ՝ ՀԱՊ) հանդիսանում է ԱԼԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի (այսուհետ՝ ՔՀՖ) առաքելության և սկզբունքների համաձայն հիմնադրված հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների (այսուհետ՝ ՔՀԿ) կամավոր միավորում, որի անդամները ներդնում են իրենց լավագույն ջանքերը՝ կյանքի կոչելու ԱԼԳ նպատակները Հայաստանում, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանում: ՀԱՊ-ը միտված է ԱԼԳ ծրագրերի իրականացմանը, երկրի ներքին խնդիրների լուծումները ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելուն, հասարակության բոլոր շերտերի մասնակցայնության և տեղեկացվածության ապահովմանը, ժողովրդավարական բարեփոխումների հետևողական իրականացմանը:

1.2. Էթիկայի կանոնագրի նպատակը

Էթիկայի կանոնագիրը (այսուհետ՝ Էթիկայի կանոնագիր) ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ-ի հիմնարար փաստաթղթերից է և սահմանում է ՀԱՊ հիմնարար արժեքները և սկզբունքները, էթիկայի կանոնները՝ միտված բարեվարքության կանոնների և վարքագծի սկզբունքների պահպանմանը, շահերի բախման իրավիճակների կառավարմանը, ՀԱՊ արտաքին գործունեության, էթիկայի կանոնագրի խախտումների, պատասխանատվության, այդ թվում ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ-ում անդամությունը դադարեցնելու հետ կապված հարաբերությունների կարգավորմանը:

1.3. Էթիկայի կանոնագրի գործողությունը՝ ըստ անձանց շրջանակի

Էթիկայի կանոնագիրը կիրառվում է ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ բոլոր անդամների նկատմամբ, ներառյալ, բայց չսահմանափակվելով.

ա. ՀԱՊ անդամ հանդիսացող ՔՀԿ անդամները,

բ. ՀԱՊ գործադիր մարմինը,

գ. ՀԱՊ ազգային համակարգողը,

դ. ՀԱՊ աշխատանքային խմբերը և ենթախմբերը, դրանց համակարգողները,

ե. ՀԱՊ էթիկայի խորհուրդը,

զ. ՀԱՊ քարտուղարությունը:

2. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

2.1. Էթիկայի կանոնագիրը հիմնված է ԱլԳ ՔՀՖ 2018 թվականի նոյեմբերին ընդունված Էթիկայի կանոնագրի տասը հիմնարար արժեքների վրա, որոնք կիսում են ՀԱՊ անդամները, մարմինները և աշխատակազմը: Այդ արժեքներն են՝

ա. Մարդու իրավունքների և սոցիալական արդարադատության խթանում.

բ. Հարգանք մարդու արժանապատվության նկատմամբ.

գ. Թափանցիկություն և հաշվետվողականություն.

դ. Արդյունավետ կառավարում.

ե. Բազմազանության և ներառականության խթանում.

զ. Գենդերային իրավահավասարության և արդարության խթանում.

է. Հանրության ուժեղացման, ժողովրդավարության վերաբերյալ հանրության շրջանում իրավատիրոջ դերի բարձրացման և մասնակցության խթանում.

ը. Բնապահպանական կայունության խթանում.

թ. Կոռուպցիայի և այլ իրավախախտումների ու անօրինական գործողությունների հակազդում.

ժ. Դրական կայուն փոփոխություններ իրականացնելու հանձնառություն:

3. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

3.1. ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ հիմնարար սկզբունքներն են.

3.1.1. Հանրային վստահություն. ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ-ի նկատմամբ վստահությունը հանրության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, դոնորների և այլ արտաքին շահագրգիռ կողմերի շրջանում ունի առաջնային նշանակություն: Վստահությունը բարձրացնելու և պահպանելու համար ՀԱՊ անդամները հանրության առջև պետք է գործեն հաշվետու և թափանցիկ, ինչպես նաև՝ դրսևորեն ազնվություն արտաքին շահագրգիռ կողմերին տեղեկատվություն տրամադրելիս:

3.1.2. Նվիրվածություն. ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ անդամները կազմակերպության հանդեպ նվիրվածության հանձնառություն ունեն: Մասնավորապես, ՀԱՊ Գործադիր մարմնի անդամները և որոշում կայացնող այլ մարմիններն իրենց որոշումներում պետք է առաջնորդվեն ԱԼԳ ՔՀՖ և ՀԱՊ շահերով, և ոչ թե անձնական կամ այն ՔՀԿ-ների, որոնց ներկայացնում են:

3.1.3. Անկախություն. ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ անդամները չպետք է մաս կազմեն կամ վերահսկվեն պետական մարմինների, գաղափարախոսական կամ այլ կրոնական կազմակերպությունների կողմից: ՀԱՊ անդամները չեն կարող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց առանձին ստորաբաժանումներից ակնկալել կամ ընդունել ցանկացած տեսակի հրահանգ:

3.1.4. Անաչառություն. ԱԼԳ ՔՀՖ և ՀԱՊ գործունեության հետ կապված որոշումների ընդունման և այլ գործընթացների ժամանակ անդամները պետք է լինեն անաչառ: Նրանց վրա չի կարող ազդել կառավարության, այս կամ այն կառույցի, ինչպես նաև ցանկացած անձի հետ ունեցած նախորդ, ընթացիկ կամ առաջիկա փոխհարաբերությունները՝ անկախ այն հանգամանքից, այդ

փոխհարաբերությունները կրում են մասնագիտական, անձնական, թե ֆինանսական բնույթ: ՀԱՊ անդամները պետք է ձեռնպահ մնան արտաքին աղբյուրներից նվերներ կամ արտոնություններ ստանալուց, որոնք ողջամիտ դիտորդի մոտ կարող են ընկալվել որպես իրենց անաչառության վրա ազդող հանգամանք:

3.1.5. Հայեցողություն. ՀԱՊ անդամները չպետք է բացահայտեն որևէ գաղտնի տեղեկատվություն, որը կապված է ԱԼԳ ՔՀՖ գործունեության հետ: Անդամները պետք է ապահովեն նաև իրենց տիրապետության ներքո գտնվող ցանկացած տեսակի գաղտնի փաստաթղթի կամ տեղեկության պատշաճ պահպանությունը: ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ-ի կողմից ուղարկված այն տեղեկությունները, որոնք նախատեսված են ծառայողական օգտագործման համար կամ հանդիսանում են ՀԱՊ ներքին օգտագործման փաստաթուղթ, համարվում են գաղտնի և ենթակա չեն հրապարակման:

3.1.6. Ոչ առևտրային գործունեության սկզբունքներ. Քաղաքացիական հասարակության կազմակերպության հիմքում ընկած է նրանց ոչ առևտրային, ոչ կառավարական, անկախ, ինքնակառավարվող և կամավոր լինելու գաղափարը: ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ ստացված եկամուտները նախատեսված չեն ՀԱՊ անդամների կարիքների համար՝ բացառությամբ ՀԱՊ-ին մատուցած ծառայությունների դիմաց նախատեսված ողջամիտ վճարները:

4. ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

4.1. Հարգանք, վարվելակերպ և քաղաքավարություն

4.1.1. Անձնական վարքով նպաստել ՀԱՊ-ի նկատմամբ հասարակության կողմից հարգանքի և վստահության բարձրացմանը, խուսափել այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որոնք կարող

են խոչընդոտել ՀԱՊ-ի աշխատանքները, վարկաբեկել ՀԱՊ-ի հեղինակությունը, վնասել երրորդ անձանց.

4.1.2. Լինել հանդուրժող և հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից կամ հավատքից, քաղաքական կամ որևէ այլ կարծիքից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, սեփականությունից, ծննդյան, հաշմանդամության, տարիքի հատկանիշներից կամ սեռական կողմնորոշումից.

4.1.3. Ձեռնպահ մնալ այնպիսի հայտարարություններ կամ գործողություններ անելուց, որոնք թեև առերևույթ չեն պարունակում վիրավորանքի հատկանիշներ, բայց ողջամիտ դիտորդի մոտ կարող են ընկալվել որպես այդպիսին.

4.1.4. Ղեկավարվել բարեխղճության, հակակոռուպցիոն, արդարության և մարդասիրության սկզբունքներով, ՀԱՊ անդամների, ՔՀԿ-ների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՁԼՄ-ների և այլ գործընկերների հետ հարաբերություններում լինել բարեխիղճ և ազնիվ, գործել էթիկայի կանոնների շրջանակներում, հրապարակային և թափանցիկ կերպով՝ հանրային շահի խթանման տրամաբանության շրջանակներում.

4.1.5. Չհրապարակել որևէ գաղտնիք հանդիսացող տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ կամ իրավասու մարմնի թույլտվությամբ նախատեսված դեպքերի: Սույն կանոնագրի իմաստով՝ հրապարակում է համարվում գաղտնիք կազմող տեղեկությունը բանավոր կամ գրավոր ձևով, զանգվածային լրատվության միջոցներով, էլեկտրոնային փոստով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը, երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը, երրորդ անձանց՝ նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝

թույլատրելը, չխոչընդոտելը կամ ՀԱՊ ներքին իրավական ակտերով սահմանված պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

4.1.6. ՀԱՊ աշխատանքներում խրախուսվում է խոսքի և կարծիքի ազատությունն ու բազմազանությունը:

4.2. Շահերի բախումը

4.2.1. ՀԱՊ-ը որդեգրել է արդար, անկողմնակալ և օբյեկտիվ գործելաոճ՝ իր գործունեության և որոշումների կայացման գործընթացում: ՀԱՊ-ը իր գործունեության ընթացքում կարևորում է շահերի բախման կառավարումը: Շահերի բախումն իրավիճակ է, երբ որոշում կայացնողն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերի սպասարկում:

4.2.2. ՀԱՊ Գործադիր մարմնի անդամը, որոշում կայացնող այլ մարմինների անդամը և ՀԱՊ անդամը իր որոշումներում պետք է առաջնորդվի ԱԼԳ ՔՀՖ և ՀԱՊ առաքելությամբ, նպատակներով և շահերով, և ոչ թե կորպորատիվ (այն ՔՀԿ-ների, որոնց ներկայացնում են վերջիններս) և անձնական շահերով:

4.2.3. ՀԱՊ Գործադիր մարմնի անդամի, որոշում կայացնող այլ մարմինների անդամի ու ՀԱՊ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի[1] գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարցի քննարկման դեպքում տվյալ անդամը չի մասնակցում քվեարկությանը: ՀԱՊ Գործադիր մարմնի անդամը և որոշում կայացնող այլ մարմինների անդամն ու

[1] Սույն կանոնների իմաստով՝ փոխկապակցված անձ է հանդիսանում որոշում կայացնողի ամուսինը, որոշում կայացնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

ՀԱՊ անդամը պետք է բացահայտի շահերի բախման փաստացի և հնարավոր բոլոր իրավիճակները, ներառյալ ցանկացած ինստիտուցիոնալ կամ կազմակերպական փոխկապակցվածություն, որը կարող էունենալ կամ առաջացնել շահերի բախում:

4.2.4. Շահերի բախման իրավիճակի առկայության դեպքում անդամը գրավոր կարգով տեղեկացնում է ՀԱՊ էթիկայի խորհրդին:

4.2.5. Շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը համարվում է Էթիկայի կանոնագրի խախտում:

4.3. ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ արտաքին գործունեությունը և ներկայացուցչությունը երրորդ անձանց հետ հարաբերություններում

4.3.1. Քաղաքական գործունեություն

ՔՀԿ-ների ներկայացուցիչները, որոնք ընտրվել են որպես ԱլԳ ՔՀՖ-ի պատվիրակներ, չպետք է փոխկապակցված լինեն որևէ քաղաքական կուսակցության հետ կամ պաշտոն զբաղեցնեն կուսակցությունում: Պատվիրակը չպետք է.

ա. լինի ընտրություններում առաջադրված քաղաքական կուսակցության և (կամ) քաղաքական կուսակցությունների դաշինքի թեկնածու,

բ. նշանակվի կամ ընտրվի որևէ քաղաքական պաշտոնում,

գ. լինի կուսակցության գործադիր և այլ մարմինների անդամ կամ խոսնակ:

Եթե վերը նշված պայմանները չեն պահպանվում, իրավասու մարմինը իրավունք ունի դիմելու ՔՀԿ-ին՝ ԱլԳ ՔՀՖ-ում իր ներկայացուցչին փոխարինելու նպատակով:

4.3.2. Հարաբերությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

ա. ՀԱՊ նպատակները և անկախությունը. ՀԱՊ-ը համագործակցում է պետական

և տեղական ինքնակառավարման մարմինների, հետ, եթե այդ համագործակցությունը ուղղված է ՀԱՊ նպատակների իրականացմանը: Այդ համագործակցությունը չպետք է որևէ կերպ վտանգի ՀԱՊ անկախությունը:

բ. Նպատակահարմար և փոխշահավետ, առաքելության վրա հիմնված. ՀԱՊ-ը ձգտում է վարել երկխոսություն և համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ այն դեպքում, երբ այդ համագործակցությունը նպատակահարմար և փոխշահավետ է և կարող է բարձրացնել ՀԱՊ արդյունավետությունը և կայունությունը՝ իր սահմանած առաջնահերթությունների և օրակարգային հարցերի իրականացման հարցում:

4.3.3. Հայտարարություններ և հրապարակումներ

ՀԱՊ անդամները պետք է ձեռնպահ մնան այնպիսի գրավոր կամ բանավոր հայտարարություններից, որոնք հակասում են ՀԱՊ կանոնադրությանը և ստանձնած հանձնառություններին: Արգելվում է անձնական դիրքորոշումները ներկայացնել որպես ՀԱՊ-ի դիրքորոշում:

4.3.4. Ֆինանսական գործունեությունը և խնդրագրերը

ա. Ֆինանսավորումը և դրանց օգտագործումը. ՀԱՊ-ը չի ֆինանսավորում այնպիսի ծրագրեր, որոնք դիտարկվում են որպես իրականացվող (իրականացված) համանման ծրագրերի կրկնություն: Արգելվում է ՀԱՊ ֆինանսավորումն օգտագործել այն նպատակների կամ գործողությունների համար, որոնք հակասում են ՀԱՊ-ի կողմից նախապես հաստատած ծրագրերին և (կամ) ծրագրային գործողություններին:

բ. Տեղեկատվական նյութերը. Բոլոր տեղեկատվական և գովազդային նյութերը, խնդրագրերը պետք է ճշգրիտ, հստակ և օբյեկտիվ արտացոլեն ԱԼԳ ՔՀՖ և ՀԱՊ առաքելությունը և ծրագրերը: Վերջինիս ապահովման համար պարբերաբար միջոցներ է ձեռնարկում ՀԱՊ-ը: Տեղեկատվական նյութերը և խնդրագրերը պետք է

ճշգրիտ արտացոլեն ԱլԳ ՔՀՖ-ից և ՀԱՊ-ից ակնկալվող ֆինանսական միջոցների օգտագործման կարգը՝ ըստ ծրագրված գործողությունների: Խնդրագրերը պետք է ներառեն այնպիսի գործողությունների կատարման հանձնառություն, որոնք կազմակերպությունը կարող է իրականացնել: Դիմողները պետք է ձեռնպահ մնան էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ չափազանցված կամ բաց թողնված տեղեկությունների ներկայացումից, որոնք կարող ենք իրենց բնույթով լինել կեղծ կամ ապակողմնորոշող:

գ. Ֆինանսավորման սկզբունքները. Ֆինանսական միջոցների տրամադրումը պետք է իրականացվի բացառապես ԱլԳ ՔՀՖ և ՀԱՊ առաքելության և նպատակների իրագործման նպատակով: Ֆինանսավորման գործընթացը պետք է զերծ լինի հովանավորչությունից, միջնորդությունից, պարտադրանքներից, ոչ պատշաճ վարքագծից, չհիմնավորված պարգևատրումից և անձնական նպատակով գնումներից:

դ. Դրամաշնորհային հանձնառություն. Դրամաշնորհ ստանալու դեպքում ՀԱՊ-ը, ստանձնելով դրամաշնորհային ծրագիրը պատշաճ կատարելու իրավական պատասխանատվություն, իրականացնում է ծրագրային գործողությունները՝ կնքված համաձայնագրի պայմաններին և ժամկետներին համապատասխան:

5. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

5.1. Եթե ՀԱՊ անդամին հայտնի են դարձել Էթիկայի կանոնագրի խախտման և (կամ) նման խախտում կատարելուն հակելու (դրդելու) վերաբերյալ փաստեր (կամ դրանք մատնանշող նախանշաններ), որոնք կատարվել են այլ անդամների և (կամ) երրորդ անձանց կողմից, ապա նա պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել ՀԱՊ Էթիկայի խորհրդին:

5.2. ՀԱՊ-ը հանձնառու է իր իրավասությունների շրջանակներում ապահովել Էթիկայի կանոնագրի խախտման մասին կամ այդպիսի խախտումների կասկածի մասին բարեխղճորեն հայտնած անդամի պաշտպանությունը

հետապնդումներից և (կամ) ցանկացած այլ տեսակի խտրականության դրսևորումից՝ այն անձի կողմից, ում դեմ ներկայացվել է հաղորդումը:

5.3. Անձը իրավունք ունի հաղորդումը ներկայացնել անանուն եղանակով:

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. Էթիկայի կանոնագրի պահպանումը պարտադիր է սույն կանոնագրի 1.3-րդ կետում նշված անձանց համար:

6.2. Էթիկայի կանոնագրի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ՀԱՊ էթիկայի խորհուրդը՝ ՀԱՊ կանոնադրությանը համապատասխան:

6.3. ՀԱՊ անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը կայացվում է ՀԱՊ համաժողովի կողմից էթիկայի խորհրդի եզրակացության հիման վրա՝ ՀԱՊ կանոնադրությանը համապատասխան:

7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Էթիկայի կանոնագիրն ուժի մեջ է մտնում ՔՀՖ-ի Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի (ՀԱՊ համաժողովի) կողմից հաստատվելու պահից:

7.2. Էթիկայի կանոնագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՀԱՊ համաժողովի կողմից:

7.3. Էթիկայի կանոնագրի մեկնաբանությունները և (կամ) պարզաբանումները տալիս է էթիկայի խորհուրդը՝ իր նախաձեռնությամբ, ՀԱՊ մյուս մարմինների կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

7.4. Էթիկայի կանոնագիրը չի կարող հակասել ԱլԳ ՔՀՖ Էթիկայի կանոնագրին: Հակասության դեպքում գերակայում են ԱլԳ ՔՀՖ-ի էթիկայի կանոնները: